ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ

HEAD OF LOGISTICS SUPPORT DEPARTMENT
OF MINISRTY OF DEFENCE OF THE REPUBLIC
OF ARMENIA
НАЧАЛЬНИК ДЕПАРТАМЕНТА
МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО
ОБЕСПЕЧЕНИЯ МИНИСТЕРСТВА
ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

0044, ք.Երևան, Բագրևանդի փ.5
Email: depart@mil.am
Հեռ.՝ (+37410) 29-45-45
Ֆաքս՝ (+37410) 29-46-13

5 Bagrevand str., 0044 Yerevan
Ереван, 0044, Багреванд 5,
Email: depart@mil.am
Tel.Тел.: (+37410) 29-45-45
Fax.Факс: (+37410) 29-46-13

№ 7/ԼԼԼ/977
"17" 03 2020թ.

«Պահապան» ՍՊԸ (ՀՎՀՀ 00882372) տնօրեն
Վ. Մելիք-Սարգսյանին
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ավան, Քուչակի 16/22
էլ. հասցե՝ 0507200069@mail.ru

ՀՀ պաշտպանության նախարարության և «Պահապան» ՍՊԸ-ի միջև 19.03.2018թ. կնքված N ԲՄԱՊՁԲ-7/17-2 գնման պայմանագրին կից 30.04.2019թ. կնքված N 2 համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը 2019թ. պետք է մատակարարեր՝

950 լրակազմ Կիտել և կիսաշրջազգեստ՝ կիսաբրդյա, ամենօրյա, որից չի մատակարարել 440 լրակազմ,

3000 հատ Բաճկոն՝ գարնանային-աշնանային, կիսաբրդյա, որից չի մատակարարել 1275 հատ,

500 լրակազմ Բաճկոն /կուրտկա/ և տաբատ՝ կիսաբրդյա սև գույնի, որից չի մատակարարել 234 լրակազմ:

Հիմք ընդունելով N ԲՄԱՊՁԲ-7/17-2 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2020թ. մարտի 16-ին միակողմանի մասնակի լուծել է Համաձայնագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Պահապան» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 1096384 ՀՀ դրամ որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 7245600 ՀՀ դրամ որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում:

Ն. ՅՈՒԼՉՅԱՆ